ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2019/10

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ՆԱԻՐԻ ԱԼԱՆԻԿԱ» ՍՊԸ-ի կողմից 24.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ՆԱԻՐԻ ԱԼԱՆԻԿԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՆԱԻՐԻ ԱԼԱՆԻԿԱ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 24.01.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2019թ. հունվարի 9-ը, ժամը 10:00-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգը բաղկացած է եղել 61 չափաբաժիններից և յուրաքանչյուր չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրերը

մի շարք հարցեր են առաջացրել «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի համար, վերջինս գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարցում է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որով, մասնավորապես, նշվել է՝

1. Ընթացակարգի 22-րդ, 23-րդ, 53-րդ, 54-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում թթվածնային խողովակների երկարությունը նշված է 213 սմ, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող արտադրանքի թթվածնային խողովակների երկարությունը 210 սմ է: Խնդրում ենք տալ պարզաբանում՝ մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

2. Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում 3-րդ համարի օռոֆարինգեալ օդամուղը ունի 10սմ երկարություն, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող 3-րդ համարի օդամուղի երկարությունը 9սմ է: Խնդրում ենք տալ պարզաբանում՝ մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

3. Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում տրախեոստոմիկ փողի թեքության անկյունը կազմում է 105 աստիճան, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող հավաքածուում փողի թեքությունը կազմում է 95 աստիճան և խոզանակը տրվում է առանձին փաթեթավորումով: Խնդրում ենք տալ պարզաբանում՝ մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

4. Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում տրախեոստոմիկ փողի թեքության անկյունը կազմում է 105 աստիճան, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող հավաքածուում փողի թեքությունը կազմում է 100 աստիճան և խոզանակը տրվում է առանձին փաթեթավորումով: Խնդրում ենք տալ պարզաբանում՝ մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

5. Ընթացակարգի 10-րդ, 59-րդ, 60-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է գերնուրբ տեսակի տանձաձև կառուցվածքի մանժետ, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող արտադրանքը ունի ցածր ճնշման գերնուրբ գլանաձև մանժետ, որը ապահովում է ճնշման հավասարաչափ բաշխում մեծ ծավալի մակերեսի վրա իջեցնելով ճնշումը տրախեայի նուրբ հյուսվածքների վրա, ապահովելով լիարժեք հերմետիկություն: Խնդրում ենք տալ պարզաբանում մեր առաջարկը կարող է համարվել համարժեք»:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի ներկայացրել պարզաբանում՝ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի հարցումների վերաբերյալ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում (04.01.2019թ.) հարցումներ է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ Ընթացակարգի մի շարք չափաբաժինների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի պատասխանել այդ հարցումներին:

Արդյունքում մինչև հայտերի ներկայացման վերջնաժակետը «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն որոշում է կայացրել մասնակցության հայտ ներկայացնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և առաջարկել բարձր մեկնարկային գներ:

Բողոքը քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ չունենալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պարզաբանումները իր կողմից ներկայացված հարցա-դրումների վերաբերյալ, «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն, ըստ էության, զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից: Բանն այն է, որ վախենալով հետագա հնարավոր խնդիրների, մասնավորապես, վախենալով իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի հրավերի պահանջներին չհամապատասխանելու վտանգից (հարցումները ներկայացվել էին հենց այս մասով), որը անխուսափելիորեն կհանգեցներ նաև «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելուն, ուտի գիտակցելով վերոհիշյալը՝ Ընկերությունը չի

մասնակցել Ընթացակարգի 11.01.2019թ. տեղի ունեցող էլեկտրոնային հակադարձ աճուրդին, որի ժամանակ կարող էր ավելի ցածր գին առաջարկել և, ինչու ոչ, մի շարք չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեր:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը: Վերոհիշյալի արդյունքում նաև խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ի լրումն «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից 24.01.2019թ. ներկայացված բողոքի, Ընկերությունը 01.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրություն, որով հավելել է հետևյալը.

«Չունենալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պարզաբանումները մեր կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ, «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն, ըստ էության, զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից: Բանն այն է, որ վախենալով հետագա հնարավոր խնդիրների, մասնավորապես, վախենալով իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի հրավերի պահանջներին չհամապատասխանելու վտանգից (հարցումները ներկայացվել էին հենց այս մասով), որը անխուսափելիորեն կհանգեցներ նաև «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելուն, ուստի գիտակցելով վերոհիշյալը՝ Ընկերությունը չի մասնակցել Ընթացակարգի 11.01.2019թ. տեղի ունեցող էլեկտրոնային հակադարձ աճուրդի՝ 6, 10, 15, 22, 53, 59, 60 չափաբաժիններին, որի

ժամանակ կարող էր ավելի ցածր գին առաջարկել և, ինչու ոչ, մի շարք չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեր»:

Ընկերությունը Բողոքով պահանջել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել էլեկտրոնային աճուրդի 6-րդ, 8-րդ, 10-րդ, 15-րդ, 22-րդ, 23-րդ, 53-րդ, 54-րդ, 59-րդ, և 60-րդ չափաբաժինները:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը, Արթուր Պարանյանը և Արմեն Հարությունյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից 24.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ կողմից 20.12.2018թ. հրապարակվել է ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերման ընթացակարգի հրավեր: 04.01.2019թ. E-auction համակարգի միջոցով 6-րդ, 8-րդ, 10-րդ, 15-րդ, 22-րդ, 23-րդ, 53-րդ, 54-րդ չափաբաժինների ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրանցվել են հարցումներ: Համակարգում որպես հարցման արձագանքի վերջնաժամկետ սահմանված է 08.01.2019թ. 10:00:00, իսկ հայտերի ընդունման վերջնաժամկետ՝ 09.01.2019թ. 10:00-ն:

ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ մինչև 08.01.2019թ. եղել են ոչ աշխատանքային օրեր, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից 08.01.2019թ. մինչև 10:00-ն հարցումների վերաբերյալ մասնագիտական կարծիքի հարցումը, քննարկումը, պատասխանների պատրաստումը և մուտքագրումը համակարգ ֆիզիկապես հնարավոր չի եղել, քանի որ 10:00-ից հետո համակարգը թույլ չի տվել պատասխանել հարցումներին: 11.01.2019թ. տեղի է ունեցել հակադարձ աճուրդ, որի արդյունքում «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն

8-րդ, 23-րդ, 54-րդ, 61-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և ներկայացրել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Վահան Վահանյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից 24.01.2018թ. ներկայացված բողոքը, բողոքի լրացումը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 04.02.2019թ. թիվ ԴՎԱ/451 գրությամբ հայտնած դիրքորոշումը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 15.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությունը.

ՀՀ ՊՆ կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 09.01.2019թ. ժամը 10:00-ն:

Աճուրդի հրավերի՝

- 3.1 կետի համաձայն՝ Օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն երեք օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

- 3.3 կետի համաձայն՝ Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է նույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է նույն հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը համակարգի միջոցով ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից 04.01.2019թ. Աճուրդի հրավերով սահմանված գնման ենթակա՝ 6-րդ, 8-րդ, 10-րդ, 15-րդ, 22-րդ, 23-րդ, 53-րդ, 54-րդ, 59-րդ, և 60-րդ չափաբաժինների ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ ներկայացվել են հարցումներ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Ընթացակարգի 22-րդ, 23-րդ, 53-րդ, 54-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում թթվածնային խողովակների երկարությունը նշված է 213 սմ, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող արտադրանքի թթվածնային խողովակների երկարությունը 210 սմ է: Խնդրում ենք տալ պարզաբանում՝ մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

2. Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում 3-րդ համարի օռոֆարինգեալ օդամուղը ունի 10սմ երկարություն, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող 3-րդ համարի օդամուղի երկարությունը 9սմ է: Խնդրում ենք տալ պարզաբանում՝ մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

3. Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում տրախեոստոմիկ փողի թեքության անկյունը կազմում է 105 աստիճան, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող հավաքածուում փողի թեքությունը կազմում է 95 աստիճան և խոզանակը տրվում է առանձին փաթեթավորումով: Խնդրում ենք տալ պարզաբանում՝ մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

4. Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում տրախեոստոմիկ փողի թեքության անկյունը կազմում է 105 աստիճան, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող հավաքածուում փողի թեքությունը կազմում է 100 աստիճան և խոզանակը տրվում է առանձին փաթեթավորումով: Խնդրում ենք տալ պարզաբանում՝ մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

5. Ընթացակարգի 10-րդ, 59-րդ, 60-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է գերնուրբ տեսակի տանձաձև կառուցվածքի մանժետ, իսկ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող արտադրանքը ունի ցածր ճնշման գերնուրբ գլանաձև մանժետ, որը ապահովում է ճնշման հավասարաչափ բաշխում մեծ ծավալի

մակերեսի վրա իջեցնելով ճնշումը տրախեայի նուրբ հյուսվածքների վրա, ապահովելով լիարժեք հերմետիկություն: Խնդրում ենք տալ պարզաբանում մեր առաջարկը կարող է համարվել համարժեք»:

Հանձնաժողովի 15.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Աճուրդի 8-րդ, 23-րդ, 54-րդ և 61-րդ չափաբաժինների մասով «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է, որ Աճուրդի գնման առարկայի մի շարք չափաբաժիններով սահմանված տեխնիկական բնութագրերը վերջինիս համար հարցեր են առաջացրել, ուստի «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, 04.01.2019թ. E-auction համակարգի միջոցով 6-րդ, 8-րդ, 10-րդ, 15-րդ, 22-րդ, 23-րդ, 53-րդ, 54-րդ չափաբաժինների ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին առնչվող հարցում է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին: Սակայն, Հանձնաժողովի կողմից որևէ պարզաբանում չստանալով՝ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին՝ նշված չափաբաժինների մասով առաջարկելով բարձր մեկնարկային գներ:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքի քննության շրջանակներում հայտնած գրավոր դիրքորոշումն ամբողջությամբ, և Բողոքներ քննող անձին խնդրեց նկատի ունենալ, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովից իր հարցադրումների վերաբերյալ պատշաճ պարզաբանում չստանալով՝ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն, իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի հրավերի պահանջներին չհամապատասխանելու մտավախությունից ելնելով՝ խնդրահարույց չափաբաժինների մասով չի մասնակցել 11.01.2019թ. տեղի ունեցած էլեկտրոնային հակադարձ աճուրդին, որի ընթացքում, մինչդեռ, կարող էր նվազեցնել առաջարկված գները, և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Այդպիսով, Ընկերության ներկայացուցչի խոսքով, վերը նշված հանգամանքները խոչընդոտ են հանդիսացել «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի՝ տվյալ գնման գործընթացին մասնակցելու իրավունքի լիարժեք իրացման համար:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց, որ Հանձնաժողովի կողմից «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի ներկայացված հարցադրումներին պարզաբանումներ չեն տրամադրվել, թեև նշեց, որ պարզաբանում չտրամադրելը դիտավորության արդյունք չէր, այլ պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ էլեկտրոնային աճուրդի համակարգում

որպես հարցման արձագանքի վերջնաժամկետ սահմանվել է 08.01.2019թ. 10:00-ն, իսկ հայտերի ընդունման վերջնաժամկետ՝ 09.01.2019թ. 10:00-ն: Եվ, քանի որ մինչև 08.01.2019թ. եղել են ոչ աշխատանքային օրեր, ուստի Հանձնաժողովի համար ժամանակային առումով անհնարին է եղել մինչև 08.01.2019թ. ժամը 10:00-ն ընկած ժամանակահատվածը հարցադրումների վերաբերյալ մասնագիտական կարծիքի հարցում կատարել, պատրաստել պատասխաններ և դրանք մուտքագրել համակարգ, իսկ ժամը 10:00-ից հետո համակարգն այլևս թույլ չի տվել պատասխանել հարցումներին:

Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց նաև, որ 11.01.2019թ. տեղի է ունեցել հակադարձ աճուրդ, որի արդյունքում «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն 8-րդ, 23-րդ և 54-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և ներկայացրել Աճուրդի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է նույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Ամանոր և Ծննդյան տոներ՝ նշվում են դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը ներառյալ (Ամանոր), հունվարի 3-ին, 4-ին և 5-ին (նախածննդյան տոներ) և հունվարի 6-ին (Սուրբ Ծնունդ և Հայտնություն), ոչ աշխատանքային օրեր: Նույն օրենքի 1.1 հոդվածի համաձայն՝ Սուրբ Ծննդյան և Հայտնության տոնին հաջորդող՝ Մեռելոց հիշատակի օր՝ նշվում է հունվարի 7-ին, ոչ աշխատանքային օր:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- 31.12.2018թ.-ից մինչև 07.01.2019թ. ներառյալ ՀՀ-ում եղել են ոչ աշխատանքային օրեր:

- E-auction համակարգում որպես Հրավերի պարզաբանում տրամադրելու վերջնաժամկետ սահմանվել է 08.01.2019թ. 10:00:00, իսկ հայտերի ընդունման վերջնաժամկետ՝ 09.01.2019թ. 10:00-ն:

- «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից E-auction համակարգի միջոցով 04.01.2019թ. ներկայացվել են հարցումներ՝ Աճուրդի 6-րդ, 8-րդ, 10-րդ, 15-րդ, 22-րդ, 23-րդ, 53-րդ, 54-րդ, 59-րդ, և 60-րդ չափաբաժինների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:

- Վերոնշյալ հարցումները կատարվել են Հրավերով սահմանված ժամկետում և առնչվել են հրավերի բովանդակությանը:

- Հանձնաժողովի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում վերոնշյալ հարցումների վերաբերյալ պարզաբանումներ չեն ներկայացվել:

- 11.01.2019թ. տեղի ունեցած հակադարձ աճուրդի արդյունքում «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն 8-րդ, 23-րդ և 54-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և ներկայացրել է Աճուրդի հրավերով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 6-րդ, 8-րդ, 10-րդ, 15-րդ, 22-րդ, 23-րդ, 53-րդ, 54-րդ, 59-րդ, և 60-րդ չափաբաժինների մասով Հրավերով նախատեսված ժամկետներում Ընկերությանը պարզաբանում չտրամադրելով՝ ըստ էության, զրկել է վերջինիս վերը նշված չափաբաժիններով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն ունենալու և դրա հիման վրա՝ առանձին չափաբաժինների մասով Աճուրդին մասնակցելու և գնային առաջարկների սահմանման հարցում ճշգրիտ կողմնորոշվելու հնարավորությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը խախտել է Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով և Հրավերի 3.1 կետով նախատեսված պահանջները:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ Աճուրդի հրավերը հաստատելիս, պարտավոր էր հաշվի առնել նույն հրավերով նախատեսված՝ հրավերի պարզաբանում ստանալու համար սահմանված ժամանակահատվածի և «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով ամրագրված ոչ աշխատանքային օրերի համընկնման հանգամանքը՝ մասնակիցների՝ գնումների մասին ՀՀ

օրենսդրությամբ երաշխավորված՝ հրավերի պարզաբանում ստանալու իրավունքի իրացմանը չխոչընդոտելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՆԱԻՐԻ ԱԼԱՆԻԿԱ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 24.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ էլեկտրոնային աճուրդը 6-րդ, 10-րդ, 15-րդ, 22-րդ, 53-րդ, 59-րդ, և 60-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ